600.0192.21.05.25

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մայիսի 2025 թվականի №192-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգի 6-րդ կետի համաձայն՝ Որոշման №2 և №6 հավելվածներով սահմանված ձևերին համապատասխան հաշվետվությունները (այսուհետ՝ Հաշվետվություններ) Հանձնաժողով են ներկայացվում յուրաքանչյուր կիսամյակի համար՝ մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 30-ը,

բ) անհատ ձեռնարկատեր Ռոման Մկրտչյանը 2024 թվականի 2-րդ կիսամյակի Հաշվետվությունները չի ներկայացրել Հանձնաժողով,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովն անհատ ձեռնարկատեր Ռոման Մկրտչյանի նկատմամբ 2025 թվականի փետրվարի 26-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 26-ի №ՄՄ/34.2-Մ2-7/849-2025 գրությամբ,

դ) անհատ ձեռնարկատեր Ռոման Մկրտչյանը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

ե) Որոշման №1 հավելվածի համապատասխանաբար՝ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն, հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ծառայություններ մատուցող կարգավորվող անձինք հաշվետվությունները Հանձնաժողով են ներկայացնում առձեռն, փոստով, էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային եղանակով, էլեկտրոնային եղանակով հաշվետվությունները ներկայացվում են փաստաթղթերի էլեկտրոնային շարժի

համակարգի (Mulberry), էլեկտրոնային փոստի կամ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Էլեկտրոնային փոստով ներկայացման դեպքում՝ հաշվետվությունների ներկայացման օր է համարվում հաշվետվությունների և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ անհատ ձեռնարկատեր Ռոման Մկրտչյանը խախտել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջը, այն է՝ Հաշվետվությունները (և ուղեկցող գրությունը) չի ներկայացրել Հանձնաժողով, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջների խախտման համար անհատ ձեռնարկատեր Ռոման Մկրտչյանին նախազգուշացնել:
2. Ընկերությանը պարտավորեցնել՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հաշվետվությունը ներկայացնել Հանձնաժողով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ռոման Մկրտչյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
21 մայիսի 2025 թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ԱՍ/34.2-Մ2-7/2308-2025պ/տ

Ա | գանձված է | A
Ց | Tax percue | Y
Փ | | P
Ո | | O
Ս | | S
Տ | | T

YEREVAN 22 MAY 2025

L0127993350AM

| ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ RETURN | CN15 |
|---|---|
| ☐ Անհայտ/ Unknown | ☐ Մերժված / Refused |
| ☑ Տեղափոխված/ Gone away | ☐ Չի պահանջվել/ Unclaimed |
| ☐ Թերի հասցե/ Insufficient address | ☐ |
| Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date | 2/06/06 |

YEREVAN 24 JUN 2025

28

Ա/Ձ Ռոման Մկրտչյան
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Խաղաղ Դոնի 5 շ,, բն 368

powered by Envelope, envelope.haypost.am

ԵՐԵՎԱՆ
YEREVAN
0002
25 JUN 2025
HayPost
ARMENIA

Տրման Նշանակման օպերատոր / Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

| | |
|---|---|
| Առաքանու հասցեատեր/ Addressee of the item | Ա/Ձ Ռոման Մկրտչյան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Խաղաղ Դոնի 5 շ„ բն 368 |

**A.R.** Ծառայողական/ On postal service
Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/ On postal service

**Առաքանու բնույթը/Nature of the item**

☐ Առաջնային նամակ/ Priority letter ☐ Հրատարակչություն/ Printed paper ☐ Ծանրոց/ Parcel
☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

☐ Պատվիրված/Registered ☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery ☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/ No of item LO127993350AM

☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order

☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order ☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

**Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination**

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

☐ հանձնվել է/ delivered ☐ վճարվել է/ paid ☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել / Return to

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

| | |
|---|---|
| Անուն կամ գրասենյակի անվանում/ Name | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով |
| Փողոց և թիվ/ Street and No | ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002 |
| Բնակավայր և երկիր/ Locality and country | Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ |
| | |

AL0127993350AM

Հավելյալ Նշում 1՝ ԱՍ/34.2-Մ2-7/2308-2025պ/ա
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am

A
0002
YEREVAN
2 5 JUN 2025
HayPost

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

**«** 21 **»** մայիսի 2025թ.

№ ԱՍ/34.2-Մ2-7/2308-2025

***Անհատ ձեռնարկատեր***
***Ռոման Մկրտչյանին***

Հարգելի պարոն Մկրտչյան,

Ձեզ է ուղարկվում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025թվականի մայիսի 21-ի «Անհատ ձեռնարկատեր Ռոման Մկրտչյանին նախազգուշացնելու մասին» №192-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ 2էջ:

21.05.2025

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

***Ա.Սաֆարյան***

**Կատարող՝ Ա.Օհանյան ☎ (015) 58-08-08 (127)**